

ի.

Ընտրութիւնը օրինաւոր համարին միայն պահպանութեամբ լինողգրեալ կանոնաց:

Այս մուշագրութեամբ սկսութիւնը նույնառաջ մասնաւոր մասնաւոր կամ ու անդարձին միջև սխզքը և առիջելք մուզ յառաւ ու նույն Ամսիս 7-ին՝ Նորին՝ Ամենապատվութիւն 8. Տեղակալը բարեհաճած աւագ սարկաւագութեան աստիճան տալ էջմիածնի երկու նոր ընդունուած միարաններին՝ Լևոն Խոջայեանին և Տիգրան Բաղդասարեանին, այլ և երկու քահանայացուներին՝ Թագէոս Տէր Մանուէլեանցին և Համբարձում Ստամբողեանցին։ Չորրորդ աստիճան շնորհեց Ճեմարանի աստուածաբանական գիտութեանց ուսուցիչ պ. Արգիս Տէր Գարբիէլեանցին և Ճեմարանի նախկին աշակերտ Մկրտիչ Զաքարեանցին։

Ամսիս 8-ին՝ Կիւրակէ օրը Նորին Բարձր Արբազնութեան ձեռնադրութեամբ կուսակրօն արեղայտութեան աստիճանին արժանացաւ բարեշնորհ։ Լևոն Խոջայեանցը, պահելով նոյն Լևոն անունը և քահանայութեան աստիճան ստացան վերոյիշեալ երկու քահանայացուները Տէր Խորէն (Համբարձում) և Տէր Սիոն (Թագէոս) անուանակոչութեամբ։ Բարեշնորհ Լևոն Արեգան Ճեմարանի նախկին ուսուցիչ է, ծննդեամբ Նոր-Նախիջևանցի Մոսկուայի Համալսարանից, մատեմատիկոս։ Վերջին ժամանակս Աւագ ուսուցիչ էր Խգդիրի ուսումնարաններում։

Տէր Խորէն և Տէր Սիոն քահանաները, Ճեմարանի նախկին Աաներից են, երկար տարիներ ուսուցչութիւն արտօ Հայոց գլուխներում։ Առաջինը Երեւանի թեմական դպրանոցի հոգաբարձութեան քարտուղարն էր և ձեռնադրուեց Կարս քաղաքի լրայ, երկրորդը Ճեմարանի անւեսոն էր և ձեռնադրուեց իւր Հայրենի Բլուր գեւղի լրայ։

Շնորհունակ Տիգրան Սարկաւագը նմանապէս Ճեմարանի նախկին սաներիցն է, ծննդեամբ Առամինիայի Ֆոքշան քաղաքից և

այս տարուայ յուլիս ամսից ընդունուած էր Տ. Տեղակալից իբրև միաբան Ա. Աթոռոյս:

Ի սրտէ շնորհաւորելով բոլոր նորընծաներին, խմբագրութիւնս ցանկանուամէ մասնաւորապէս երկու նոր միաբանակիցներին՝ սոկունութիւն, յարաւեռութիւն անձնուիրութեան մէջ և հաւասարիմ ծառայութիւն Ազգի և Եկեղեցու խոկական շահերին:

Աւելորդ չենք համարում հաղորդել մեր ընթերցողներին նաև այն, որ չեմարանի Բ. և Գ. լսարանցիները հրաւիրուելով Տէր Տեղակալի մօտ և մերջինիս հայրական խրատներն ու յորդորները լսելուց յետոյ՝ շատերը նրանցից յայտնեցին իրենց մասպրութիւնը մօտիկ ապագայում կրօնաւորուելու թէ իբրև կուսակրօն և թէ իբրև ամուսնացեալ քահանայ, խոկ երկուոք՝ Ասոուածատուր Մանուկեան, ուսանող Բ. Լսարանի, Ա.Ջիոն-Կարա-Հիսարցի և Ա.Էքսանդր Չուբարեան, Գ. լսարանի ուսանող, Օգեսացի, խոկոյն և եթ պատրաստականութիւն յայտնեցին մանել Մայր Աթոռիս միաբանից շարքը, ընդունելով կուսակրօնութիւն: Տէր Տեղակալը օրհնեց բոլորին և խրախուսեց: Այս երկու ուսանողների ձեռնապրութիւնը յետաձգուեց, մի քանի անհրաժեշտ թղթերի պակասութեան պատճառով: Խմբագրութիւնս մեծայոյս է շուտով տեսնել այդ երկուոքի և գրանց ընկերներից շատերի Մայր Աթոռոյս միաբանակցիլլ:

Շնորհակալութեամբ սոսացանք Վիէննայի Մխիթարեաններից «Յուցակ Հայերէն ձեռագրաց Կայսերական մատենագարանին ի Վիէննա, կազմեց Հ. Յակովոս Տաշեան, Մխիթարեան ուխտէն. 1891, Վիէննա, Մխիթարեան Տպար.» Գիտնական միաբանութիւնը ձեռնարկել է մի Մայր—Յուցակ հրատարակել Հայերէն բոլոր ձեռագրերի: Այս առաջին հրատարակութիւնը Մայր—Յուցակի Ա. Հատորի, Ա. տետրն է: Այս յոյժ օգտակար և հայկական գիտութեանց համար անպայման անհրաժեշտ ձեռնարկութեանը խոստացել են աշխատակցել՝ իթիւս ուրիշ շատերի, Հ. Պարոնեան Անդրայից, Պ. Մառ, Պետերբուրգից, Հ. Մխիթարեան՝ Հոռլից և լն: Զեռ-

նարկութեան թէ ներքինը և թէ արտաքինը լիովին բաւականութիւն են տալիս գիտութեան և ճաշակի ամենախիստ պահանջներին:

Մի բան, որ մնումէ մեզ ցանկալ՝ այդ այն է, որ փոքրիկ ժողովածուների ցուցակների հետ կամ գոնէ սրանցից յետոյ՝ կարելի եղածին չափ շուտով լրս ընծայուէին հայկական ձեռագրերի երեք մեծ ժողովածուների մայր—ցուցակները՝ կըմիածնի, Երուսաղէմի և Վենետիկի մատենադարաններինը: Առ այժմն այս վերջին մատենադարանը բոլոր յարմարութիւններն ունի այդ իւր սպարագը կատարելու: Թէ բոլոր հայ ձեռագրերի ամբողջական Մայր—Յուցակի հրատարակութիւնը—գիտութեան պահանջների համեմատ—որչափ աւելացնելու է մեր ունեցած ծանօթութիւնները, որչափ գիւրացնելու է հին գրականութեամբ զբաղուղների աշխատանքը, որչափ կրծատելու է զուր, բայց հարկից ստիպեալ գիտնական թարթափմունքներն ու ենթադրութիւնները, այս բոլորը ամբողջուկին կարող է հասկանալի լինել միմիայն իրենց անձը գիտնական հետազոտութիւնների նույիրող անձերին:

Խմբագրութեանս գործակցին ուղղուած մի նամակից քաղում ենք հետեւեալ հետաքրքրական նորութիւնները:

Մի Գերմանացի դոկ. պ. Բելք, որ հնութիւններ և արձանագրութիւններ է ժողովում Պրոֆ. Վիրխովի համար և մի քանի անգամ արդէն եղել է կըմիածնում, անցնելով Տաճկահայաստան և այցելելով Բայազիդ, Դիաղին, Ռոչբիլխաս, Բատնոց, Լիմ անապատ, Վան, Բաշկալա, Արտամէդ, Աղթամար, Բաղէշ, Մուշ, Երղնկան, Հասան-Ղալայ և վերադառնալով Կաղզուան գրումէ (28/40), որ իւր հետախուղութիւնները շատ յաջող են եղել: Գտել է ուսան հատ նոր բանուագիր արձանագրութիւն, յաջողել է ուրիշ շատ ոյդպիսի արձանագրութիւններ լուսանկարել, որոնք ուրիշ ճանապարհորդներից անվերծանելի էին մնացել իրեւ ջնջուած և մաշուած, և կորած էին համարում գիտութեան համար: Մենք ինդրել էինք պ. Բելքին առանձին ուշագրութիւն դարձնել Ա.

Յովհաննէս վաճիքի (Խոչքիլիսէ) Ասորական (սիրիակ) արձանաւդրութեանցը, որոնց կիսաստ օրինակները կան չ. Ալիշանի Ալրաստում, և նոյն վաճիքի հայկական մեծ արձանագրութեանը եօթներորդ դարից: Պարոնին յաջողուել է լուսանկարել այդ բոլորը, որոնցից մի մի օրինակ խոստացել է մեզ ուղարկել բերլինից: Ա. Յովհանննէսի Հերակլ Կայսեր արձանագրութեամբ մենք կունենանք հայկական տառերի ձևը եօթներորդ դարում: Յայտնի է որ մեր Մեսրոպեան անուանուած երկաթագրերը իններորդ դարից առաջ չեն և Ա. Մեսրոպից ժամանակով 4 դար աւելի նոր են: Ասորական երեք արձանագրութիւնն է լուսանկարել և արտագրել պ. Բելը Ա. Յովհաննու լինքում: Պարոնի հաւասարացնելով՝ այդպիսի երեք արձանագրութիւնն էլ գտել է նա գառնիում, Տրգատի թախուում: Որով կունենանք վեց ասորական արձանագրութիւն, հաւասականաբար աւելի հին քան Ա. Մեսրոպի գիւտը: Արանցով թերեւ Հնարաւոր լինի որոշել այն կնճռոտ հարցը թէ՝ հինգերորդ դարից առաջ արգեօք գրել են Հայերը օտար (ասորական, յունական, պարսկական) գրերով և Հայերէն բառերով, ինչպէս որ կարծում են շատերը:

Պարոնը տեսել է շատ Հայերէն ձեռագրեր Աիմ անապատժւմ վարագում և մասնաւորապէս Աղթամարում: Իթիւս ուրիշ ձեռագրերի տեսել է նաև Հին խորէնացնել. ինչպէս հաւաստիացնումն է պարոնը միմիայն Աիմ անապատժւմ կայ երեք խորենացի: Պարոնի տեսած ձեռագրերից մի քանիսը 900 տարեկան և աւելի հին են եղել:

Մեզ մնումէ ցանկալ, որ որ առաջ ձշմարտուխն պարոնի արած գիւտերը, որոնց մասին երեխ շուտով կտեսնենք Հրատարակուած աեղեկութիւնները: Այն Հայ գիտնականները որոնք կցանկան յարաբերութեան մէջ մտնել պ. Բելքի Հետ, կարող են դիմել՝ Berlin, Schellingstrasse № 10 D. W. Belck. կամ կարող են գիմել ուսուցչապետ պ. Ռուգովի Վիբուսովին պ. Բելքին հաս յնելու յանձնաբարութեամբ: